# ՄՈՎՍԵՍԻ ՀԻՆԳ ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐԸ

**ԵԲՐ. 11:8-11,17-18, ԵԼԻՑ 3-4**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եւ Եհովան ասեց Աբրամին. **ԳՆԱ քո երկրից**, եւ քո ազգականներից, եւ քո հօր տանիցն այն երկիրը, **որ ես քեզ ցոյց կտամ:** 2 ***Եւ ես քեզ մեծ ազգ պիտի շինեմ***, եւ քեզ օրհնեմ, եւ քո անունը մեծացնեմ եւ դու օրհնեալ կլինիս: 3 Եւ քեզ օրհնողներին կօրհնեմ եւ քեզ անիծողներին կանիծեմ. ***եւ երկրի բոլոր ազգերը քեզանով կօրհնուին:*** 4 **Եւ Աբրամը գնաց** ինչպէս Եհովան նորան ասել էր. Ղովտն էլ գնաց նորա հետ. եւ Աբրամը եօթանասունեւհինգ տարեկան էր Խառանից դուրս գալիս:

### A. ԱՆՁՆԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄ (ԾՆՆԴ. 12:1)

- ***Եւ ես քեզ մեծ ազգ պիտի շինեմ:***

### B. ՍԵՐՆԴԱՅԻՆ ԽՈՍՏՈՒՄ (ԾՆՆԴ. 12:2)

- ***եւ քեզ օրհնեմ,***

### C. ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ (ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ) ԽՈՍՏՈՒՄ (ԾՆՆԴ. 12:3)

- ***եւ երկրի բոլոր ազգերը քեզանով կօրհնուին:***

---

- **Ել. 3:10 - Եւ հիմա ԳՆԱ Փարաւօնի մօտ, եւ հանիր իմ ժողովուրդը՝ Իսրայէլի որդիքը Եգիպտոսիցը:**

## ԲԱՆԱԼԻ ԲԱՌ - ՀՆԱԶԱՆԴՎԵԼ – ԳՆԱԼ

**հնազանդվել - ὑπακούω** (verb) գործողություն, to listen (Հուփաքուո) - 21 անգամ, Ն.Կ:

**Առաջին անգամ ՆԿ-ում** – *Մատ. 8:27 - Իսկ մարդիկը զարմացան եւ ասում էին, Սա ինչպիսի՞ մէկն է՝ որ **քամիները եւ ծովն էլ հնազանդում են** սորան:*

**Գնալ Բառը (verb) գործողություն** - 81 անգամ

Մատ. 5:24 - Թո՛ղ այնտեղ քո ընծան սեղանի առաջին. եւ **ԳՆԱ** առաջ հաշտուիր քո եղբօր հետ. եւ հետոյ եկ ընծադ մատուցրու:

His House MINISTRIES

## ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

**(Եբր. 11:23-:30, Ելից 3, 4)**

**Յաւատքով Մովսէսը երբոր ծնվեց՝ երեք** ամիս թաքուն պահվեց իր ծնողքի ձեռով. վասնզի տեսան թէ մանուկը գեղեցիկ էր, եւ չվախեցին թագաւորի հրամանից:

24 **Յաւատքով Մովսէսը երբոր մեծացավ՝** չկամեցաւ Փարաւօնի աղջկա որդի
կոչուիլ: 25 Ավելի լավ համարեց Աստուծոյ ժողովրդի հետ չարչարուիլ, քան թէ մի առ
ժամանակ մեղքի զուարճութիւնն ունենալ, 26 Ավելի մեծ հարստութիւն համարելով
**Քրիստոսի նախատինքը Եգիպտացիների հարուստ գանձերից.** որովհետեւ աչք դրած
մտիկ էր տալիս վարձքի հատուցմանը:

27 **Յավատքով թողեց նա Եգիպտոսը** չվախենալով թագաւորի բարկութիւնից. որովհետեւ
համբերեց՝ Անտեսանելուն տեսնողի պէս:

28 **Յաւատքով արավ զատիկը եւ արիւնի սրսկումը.** որ առաջինեկներին սատակիչը
չմօտենայ նորանց:

29 **Յաւատքով անցան Կարմիր ծովովն** ինչպէս ցամաքով. որի փորձն Եգիպտացիներն
անելիս խեղդուեցան:

**Յաւատքով Երիքովի պարիսպները վայր ընկան,** երբոր եօթն օր նորա շուրջը պտտեցին:

**(Ելից 3:1-5)**

*Եւ Մովսէսը իր աներոջ հօտը արածեցնում էր. եւ հօտը անապատի ետեւը քշելով Աստուծոյ
Քորեբ սարը եկաւ: 2 Եւ Եհովայի հրեշտակը կրակի բոցով երեւաց նորան մորենու միջից. եւ
նա տեսաւ որ ահա մորենին կրակով վառվում էր, բայց մորենին չէր սպառվում: 3 Եւ
Մովսէսն ասեց՝ Մէկ դառնամ ու տեսնեմ այս մեծ տեսարանը, թէ ինչո՞ւ համար մորենին չէ
այրվում: 4 Եւ Եհովան տեսաւ, որ նա դարձաւ տեսնելու, եւ* ***Աստուած մորենու միջիցը
կանչեց նորան եւ ասեց.*** *Մովսէս, Մովսէս. եւ նա ասեց. Ահա ես: 5 Եւ ասեց. Այս տեղին մի
մօտենար. կօշիկներդ հանիր ոտքերիցդ, որովհետեւ այն տեղը, որի վերայ դու կանգնել ես,
սուրբ երկիր է:*

### 1. ԱՐԴԱՐԱՑՈՒՄ #1. ԵՍ ԲԱՎԱԿԱՆԻՆ ԼԱՎԸ ՉԵՄ - I'M NOT GOOD ENOUGH

**ԵԼԻՑ 3.11. «ԵՍ Ո՞Վ ԵՄ, ՈՐ ՓԱՐԱՎՈՆԻ ՄՈՏ ԳՆԱՄ, և ԻՍՐԱՅԵԼԻ ՈՐԴԻՆԵՐԻՆ ԵԳԻՊՏՈՍԻՑ ՀԱՆԵՄ»:**

- *Ել. 3:12 -* ***Եւ Եհովան ասեց.*** *թէ Ես քեզ հետ կլինիմ, եւ սա քեզ համար նշան կլինի, որ ես եմ քեզ ուղարկել. երբոր ժողովուրդը Եգիպտոսիցը հանես, այս սարի վերայ կպաշտէք Աստուծոյն:*

2. **ԱՐԴԱՐԱՑՈՒՄ #2. ԵՍ ՉՈՒՆԵՄ ԲՈԼՈՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ - I DON'T HAVE ALL THE ANSWERS**

**ԵԼԻՑ 3.13. «ԵՎ ՄՈՎՍԵՍՆ ԱՍԱՑ ԱՍՏԾՈՒՆ. ԱՀԱ ԵՍ ԳՆՈՒՄ ԵՄ ԻՍՐԱՅԵԼԻ ՈՐԴԻՆԵՐԻ ՄՈՏ, ԵՒ ԿԱՍԵՄ ՆՐԱՆՑ. ՁԵՐ ՀԱՅՐԵՐԻ ԱՍՏՎԱԾՆ ԻՆՁ ՁԵԶ ՄՈՏ Է ՈՒՂԱՐԿԵԼ. և ԵՐԲՈՐ ԻՆՁ ԱՍԵՆ. ԹԵ Ի՞ՆՉ Է ՆՐԱ ԱՆՈՒՆԸ, ԵՍ Ի՞ՆՉ ԱՍԵՄ ՆՐԱՆՑ»:**

- *Ել. 3:14,18,21-22 - **Եւ Աստուած ասեց Մովսէսին. Ես եմ ՈՐ ԵՄ**. Եւ ասեց. Այսպէս ասիր Իսրայէլի որդիներին. Ինձ **ԵՄը ուղարկեց ձեզ մօտ:** 18 Եւ նորանք քո ձայնին կլսեն. եւ հիմա թող **երեք** օրուայ ճանապարհ գնանք դէպի անապատը, որ մեր Եհովայ Աստուծոյն զոհ մատուցանենք: 21 Եւ այս ժողովրդին **շնորհք** կտամ Եգիպտացիների առաջին.*

1. *Ես եմ Կյանքի Հացը - Յով. 6:35*
2. *Ես Եմ աշխարհի լույսը - Յով. 8:12*
3. *Ես եմ դուռը - Յով. 10:9*
4. *Ես եմ բարի Հովիվը - Յով. 10:11*
5. *Ես եմ հարությունը և կյանքը - Յով. 11:25*
6. *Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը - Յով. 14:6*
7. *Ես եմ ճշմարիտ գինին - Յով. 15:1*

- *Յով. 14:26 - Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը կուղարկէ իմ անունովը, նա ամեն բան կսովորեցնէ ձեզ, եւ կյիշեցնէ ձեզ ամեն ինչ որ ձեզ ասեցի:*

3. **ԱՐԴԱՐԱՑՈՒՄ #3. ՄԱՐԴԻԿ ՉԵՆ ՀԱՎԱՏԱ ԻՆՁ - PEOPLE WON'T BELIEVE ME**

**ԵԼԻՑ 4.1. «ԵՎ ՄՈՎՍԵՍԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ԵՒ ԱՍԱՑ. ԲԱՅՑ ԱՀԱ ՆՐԱՆՔ ԻՆՁ ՉԵՆ ՀԱՎԱՏԱ, ՈՉ ԷԼ ԻՄ ՁԱՅՆԻՆ ԿԼՍԵՆ. ՈՐՈՎՀԵՏև ԿԱՍԵՆ ԹԷ ԵՀՈՎԱՆ ՔԵԶ ՉԻ ԵՐևԱՑԵԼ»:**

- *Ել. 4:2-4,6 - **Եւ Եհովան ասեց նորան.** Այդ ի՞նչ է քո ձեռքին. եւ նա ասեց՝ Գաւազան: 3 Եւ ասեց. Գետինը գցիր դորան. եւ նա գետինը գցեց, եւ օձ եղաւ, եւ Մովսէսը նորա առաջից փախաւ: 4 Եւ Եհովան ասեց Մովսէսին. Ձեռքդ մեկնիր եւ պոչից բռնիր. եւ նա իր ձեռքը մեկնեց եւ նորան բռնեց, եւ նա գաւազան եղաւ նորա ձեռքումը.*
  *6 Եւ Եհովան դարձեալ ասեց նորան. Հիմա ձեռքդ տար ծոցդ. եւ նա ձեռքը ծոցը տարաւ, եւ դուրս հանեց, եւ ահա ձեռքը ձիւնի պէս բորոտ եղաւ:*

4. **ԱՐԴԱՐԱՑՈՒՄ #4. ԵՍ ՇԱՏ ՎԱՏ ՀՌԵՏՈՐ ԵՄ - I'M A TERRIBLE PUBLIC SPEAKER**

**ԵԼԻՑ 4.10. «ԵՎ ՄՈՎՍԵՍՆ ԱՍԵՑ ԵՀՈՎԱՅԻՆ. ՕՀ, ՏԵՐ ԻՄ, ԵՍ ՃԱՐՏԱՐԱԽՈՍ**

ՉԵՄ, ՈՉ ԵՐԵԿՎԱՆԻՑ ՈՒ ՄԷԿԵԼ ՕՐՎԱՆԻՑ, ՈՉ ԷԼ ԾԱՌԱՅԻԴ ՀԵՏ ԽՈՍԵԼՈՒՑԴ ՀԵՏՈ, ԱՅԼ ԵՍ ԾԱՆՐԱԽՕՍ և ԾԱՆՐԱԼԵԶՈՒ ԵՄ»:

- Ել. 4:11-12 - **Եւ Եհովան ասեց նորան.** Ո՞վ է մարդուն բերան տվել. կամ ո՞վ է անում համրը կամ խուլը կամ աչք ունեցողը կամ կոյրը, չէ՞ որ ես Եհովաս: 12 *Եւ հիմա գնա, եւ ես քո բերանի հետ կլինիմ,* եւ քեզ կսովորեցնեմ ինչ որ պիտի խօսես:

5. ԱՐԴԱՐԱՑՈՒՄ #5. ԵՍ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՉԵՄ ԴՐԱ ՀԱՄԱՐ - I'M NOT QUALIFIED

**ԵԼԻՑ 4.13. «ԵՎ ՆԱ ԱՍԱՑ. ՕՀ, ՏԵՐ ԻՄ, ԱՂԱՉԵՄ՝ ՈՒՂԱՐԿԻՐ ՈՐԻ ՁԵՌՔՈՎ ՈՐ ՈՒԶՈՒՄ ԵՍ ՈՒՂԱՐԿԵԼ»:**

- Ել. 4:14-17 - Եւ Եհովայի բարկութիւնը բորբոքուեց Մովսէսի դէմ, եւ ասեց. Մի՞թէ ես քո Ահարօն եղբօրը՝ Ղեւտացուն չեմ ճանաչում որ **ճարտարախօս է.** ահա նա դուրս է գալիս քեզ դիմաւորելու, եւ քեզ տեսածի պէս իր սրտում պիտի ուրախանա: 15 Եւ դու խօսիր նորա հետ, եւ խօսքեր դիր նորա բերանում. եւ ես քո բերանի եւ նորա բերանի հետ կլինիմ, եւ ձեզ կսովորեցնեմ ինչ որ պիտի անէք: 16 Եւ քո տեղը նա կխօսէ ժողովրդի հետ. եւ նա քեզ համար բերանի տեղ կլինի, ու դու նորա համար Աստուծո տեղ կլինիս: 17 Եւ այս գաւազանն առ քո ձեռքը, որ նորանով անես նշանները:

## Ամփոփում

- **Ի՞նչ է Աստված ցույց տվել ձեզ ձեր ապագայի մասին:**
- **Ներկայումս ի՞նչ է Աստված սովորեցնում ձեզ և ինչի՞ համար է պատրաստում:**
- **Ինչպե՞ս բացահայտել Աստծո ՏԵՍԻԼՔԸ ձեր կյանքում:**
    - **Եթե չգիտեք, թե որն է ձեր տեսիլքը, պարզեք, թե ինչի հանդեպ ձգտում ունեք. Ձեր ձգտումը կտանի ձեզ անմիջապես ձեր տեսիլքի մոտ:**